ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«__» 03 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 09

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Մհեր Ադամյան***
Ք. Երևան, Ռուբինյանց 21/3, բն. 19

Գործունեությունը՝ ***Գեղամեջ համայնքում պահեստ սառնարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 09

'01' 03 2019թ.

Գետամեջ համայնքում պահեստ սառնարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	քաղաքացի Մ. Ադամյան
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Գետամեջ համայնք

Գործունեության նպատակն է կառուցել 4105.0մ^2 մակերեսով սառնարանային տնտեսություն՝ հետագայում տնտեսվարող սուբյեկտներին վարձակալությամբ տրամադրելու նպատակով:

Շինարարությունը նախատեսվում իրականացնել պատվիրատու՝ Մհեր Ադամյանին պատկանող, 4.8հա տարածքի վրա, որը գտնվում է Կոտայքի մարզի Գետամեջ գյուղի արտադրական գոտում:

Ըստ հայտի հողատարածքը ամայի է, զուրկ շինություններից: Նշված տարածքը գտնվում է Երևանից 22.0կմ հեռավորության վրա՝ Հրազդան գետի կիրճի վերին հատվածում: Հողամասի մոտով անցնում է չգործող գազատար, որը <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ կողմից նախատեսվում է ապամոնտաժել և տեղափոխել (ըստ30.01.2019թ. N01-10/149 տեղեկանքի): Հողամասը արևմտյան կողմից սահմանակից է <<Կամուրջշին>> ՍՊԸ-ին, որը զբաղվում է երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրությամբ, իսկ հյուսիս արևմտյան մասով <<Սարանիստ>> ՍՊԸ-ի՝ քարերի վերամշակմամբ զբաղվող, Գետամեջի մասնաճյուղին:

Նշված տարածքը նախկինում տրամադրված է եղել Երևան–Սևան արագընթաց երկաթգծի /մոնոռելս/ շինարարության համար: Այդ իսկ պատճառով տարածքը ամբողջությամբ փորված է մոնոռելսի անցկացան համար, բացակայում է բնական հողածածկը, բուսածածկը և կենդանիների համար նպաստավոր ապրելավայրերը: Ըստ նպատակային նշանակության տարածքը արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողամաս է:

Հայցվող տարածքում սառնարանային մասնաշենքի, ընդհանուր մասի և անցակետի ճարտարապետական մասը կատարված է ճարտարապետահատակագծային առաջադրանքի (07.11.2018թ. N 3), անշարժ գույքի

նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի և պատվիրատուի առաջադրանքի հիման վրա: Սառնարանային տնտեսությունը ներառելու է հիմնական արտադրական մասնաշենքը և պահակակետը /անցակետ/:

Սառնարանային մասնաշենք - հատակագծում ուղղանկյուն կտրվածքի 97.33մx42.18մ չափերով մետաղական կարկասով շինություն, մետաղական ֆերամներից, ձևավոր թիթեղով ծածկով:

Անցակետ - հատակագծում ուղղանկյուն կտրվածքի 10մx4.8մ չափերի, երկու հարկանի շինություն, տանիքը միաթեք, կանոնավոր ջրահեռացմամբ, քարե պատերով:

Համաձայն աշխատանքների ժամանակացույցի շինարարության ընդհանուր տևողությունը 2 տարի է, ընդ որում առավել ռիսկային՝ հողային աշխատանքները և հիմքերի կառուցումը, կտևի ընդամենը 7 ամիս: Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքի ջրցանի և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Ըստ նախնական գնահատման հայտի ջրցանի համար օրական կօգտագործվի՝ 1.8մ^3, իսկ խմելու նպատակով՝ 0.35մ^3 ջուր:

Ջրամատակարարումը կատարվելու է տարածքի մոտով անցնող ջրատարից, համաձայն Վեոլիյա ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայման N ԷՀ2932: Քանի որ տարածքում չկա կոյուղու ցանց, ուստի նախատեսվում է հիմնական շինության եզրամասում կառուցել անթափանց պատերով ստորգետնյա տարողություն, որում կկուտակվեն կենցաղային կեղտաջրերը և պարբերաբար կտեղափոխվեն Երևանի կոյուղու ցանցի համապատասխան կետ: Էլ. սնուցումը կկատարվի ըստ ՀԷՑ ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանների:

Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի տարածքի 30% (1.44հա) նախատեսվում է կանաչապատել՝ իրականացնելով ծառատունկ: Ելնելով նշված չափերից նախատեսվում է տնկել մի քանի շարք 2 տեսակի ծառաբույսեր, որոնք շարքերում կտեղաբաշխվեն մեկ առ մեջ (գնդաձև թխկին՝ Acer platanoides f. globosa և բրգաձև կաղնի՝ Quercus robus f. fastigiata):

Աշխատանքների իրականացման ժամանակ նախատեսվում է հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական աշխատանքների ընթացքում փոշու արտանետումները նվազեցնելու համար ջրցանի իրականացում,
- փոշու տարածումը կանխարգելելու համար համապատասխան բարձրությամբ թաղանթով սորուն նյութերի պահեստների ծածկում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգաբերում,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- կեղտաջրերի հավաքման համար նախատեսել կոյուղաջրերի հոր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- բացառել մի քանի տեխնիկական և տրանսպորտային միջոցների միաժամանակյա շահագործումը:

- բետոնի խառնուրդը նախատեսվում է բերել մոտակայքում գտնվող բետոնահանգույցից, տեղում չպատրաստել:

Շահագործման փուլ - Սառնարանային սարքավորումները նախատեսվում են ֆրեոնային սառնագենտով, որոնք ընտրվելու են այնպես, որ համապատասխանեն «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրությամբ սահմանված պահանջներին:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության, 18.02.2019թ. Գետամեջի համայնքապետարանում իրականացված հանրային քննարկումների, ինչպես նաև փորձաքննական գործընթացում կատարված լրամշակումների, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն աննշան, կարճատև և տեղային:

Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող արտանետումները կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից:

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում նախնական գնահատման հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ըստ հայտի՝ լուծված են կեղտաջրերի հավաքման և հեռացման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի, բարեկարգման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների ծավալները, խախտվող տարածքի փոքր մակերեսը, մշակված բնապահպանական միջոցառումները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պետք է ունենա կարճատև և նվազագույն ազդեցություն՝ չգերազանցելով սահմանված նորմերը:

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի հոդված 20-ի 7-րդ կետի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված

բնապահպանական միջոցառումների պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինաղբը (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Անհրաժեշտ է. շինանյութերի և թափոնների տեղափոխումն իրականացնել փակ ծածկ ունեցող բեռնատար ավտոմեքենաներով՝ համայնքի և հարակից բնակելի տարածքում փոշու արտանետումները նվազեցնելու համար:

5. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել և ավարտել սահմանված ժամին՝ բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհային բեռնվածությունից խուսափելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մ. Ադամյանի կողմից ներկայացված Գետամեջ համայնքում պահեստ սառնարանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ Ա. Դռնոյան

Գլխ. մասնագետ Կ. Մովսիսյան